ընկաւ ծուղակի մէջ: Տարօնի իշխանը ձերբակալուած էր 851 թուին, այժմ Բուղայի ձեռքին էին Արծրունիք՝ Աշոտ եւ Գուրգէն: Մընում էր հիւսիսային Հայաստանի իշխանների հաշիւը տեսնել:

Բուղան Վասպուրականից անցնում է Դուին ձմերելու եւ պատրաստուելու նոր զինուորական գործողութեան: Ահա այս ժամանակ է որ հրապարակ է դուրս գալիս Սմբատ Բագրատունին, Աբլաբաս կոչուած: «Իշխանք արեւելեայք խոյս տուեալ յերեսաց նորա, ասում է պատմագիրը, ետուն տեղի, ելին կալան զամրական տեղիս ի բերդս եւ ի քաղաքս եւ ի լերինս ընդ ինքեանս գումարեալ զզօրս եւ զբնակիչս աշխարհաց իւրեանց ամենայն պատրաստութեամբ»: Ասել է թէ հայ իշխանները քաշւում են լեռները եւ ամրոցները իրենց մարդկանցով, պատերազմական դիրք բռնում:

Տարբեր քաղաքականութեան է հետեւում երկրի պատասխանատու տէրը՝ Սմբատ Բագրատունին:

Թովմա Արծրունին ասում է որ «իբրեւ գիտաց թէ ոչինչ օգուտ բերէ արտաքոյ հրամանաց նորա (այսինքն Բուղայի) լինել», փութաց ներկայանալ Բուղային: Առաջուց արդէն ղրկել էր իր որդի Աշոտին դիմաւորելու թիւրք զօրավարին: Սմբատին պատմագիրը համարում է «առաջնորդ Բուղայի ի գործս պատերազմացն եւ յելս եւ ի մուտս աշխարհացն»: Նոյնը վկայում է Յովհաննէս կաթողիկոսը, համառօտէն, առնելով Թովմայից. «զմահ ի կեանս խառնեալ սակս աշխարհին իւրոյ փրկութեան գնայ ընդ առաջ» Բուղայի, եւ «կարապետէ առաջի նորա եւ ճանապարհ նմա հորդէ ամենայն ուրեք ուր եւ նա խորհեսցէ երթալ»:

Այս խօսքերի մէջ խուլ դառնութիւն կայ: Սակայն, Սմբատի վարմունքը եթէ դատենք, յաջորդող անցքերի լուսով, կը տեսնենք, որ մատնութեան մասին խօսք չի կարող լինել: Սմբատ գիտէր, որ ոչ թիւրք Բուղան եւ ոչ Մուտավաքիլ ամիրապետը այն անձերից չեն, որ պարտութեան դէպքում զիջանին: Ուստի մօտենալով Բուղային կարողացաւ նրա վստահութիւնը գրաւել եւ, իբրեւ, առաջնորդ եղաւ նրան, բայց ոչ ընդդէմ հայ իշխանների: Ընդհակառակը, նա աշխատեց եւ յաջողեց մեկուսացնել սպառնող վտանգը եւ գազանաբարոյ զօրավարի զայրոյթն ու կատաղութիւնն ուղղել Հայաստանի սահմաններից դուրս նախ՝ Թիֆլիսի արաբ ամիրայի դէմ եւ յետոյ լեռնականների:

Սմբատին քաղաքականութեան հետեւեց եւ նրա փեսան՝ Բագարատը, Տայքի եւ Կղարջքի իշխանը: Բագարատին եւս ձեռնտու էր Բուղայի միջոցով կործանել Թիֆլիսում բոյն դրած մուսուլման իշխանին:

Երբ Դուին ձմերելուց յետոյ Բուղան ելաւ գարնանը շարունակելու իր շահատակութիւնները, Սմբատը ուղղեց նրա հարուածը Թիֆլիսի Իսահակ ամիրայի դէմ: Սա դուրս եկաւ՝ «սամոյր զինքեամբ արկեալ եւ գաւազան ի ձեռին», յուսալով, որ կը ներուի, բայց ձերբակալուեց: Կինը, յայտնի գեղեցկուհի, գնաց Բուղային խնդրելու փրկել իր ամուսնուն, բայց հակառակ արդիւնքի հասաւ: Բուղան առաւ նրան կնութեան, որ եւ յետոյ նրա կորստեան պատճառ եղաւ:

Վրաստանից յետոյ Բուղան արշաւանք է գործում Լեռնականների վրայ, որ մեր պատմագիրները կոչում են Տանայք: Այստեղ արաբական զօրքը պարտութիւն է կրում: Սմբատ կարող էր պարծենալ իր ծրագրի յաջողութեամբ: Վրաց Տարեգիրքը մի կարեւոր հանգամանք է յիշում, որ արդարացնում է մեր ենթադրութիւնը Սմբատի վարուելակերպի վերաբերեալ: Երբ Բուղան ուղղւում է լեռնական Ծանարների դէմ, «Աբուլբաս Հայոց իշխանը եւ Գուարամ մամփալը (որ Սմբատի փեսայ՝ Բագարատի եղբայրն էր) գաղտնի յորդոր են ղրկում նրանց, որ Բուղային դիմադրեն» Brosset, Hist. I, 267) :

Արաբ զօրքը պարտւում է, ցրտերի պատճառով մեծ կորուստներ է ունենում եւ ուժասպառ դառնում է Բուղա Պարտաւ ձմերելու: Թովմայի ասելով 9 օրուայ մէջ 19 ճակատ է տեղի ունենում, բոլորն էլ ձախորդ Բուղայի համար:

Դարձեալ Սմբատի ազդեցութեան պէտք է վերագրել, որ Բուղան գալիս է Պարտաւ եւ ոչ Դուին համաձայն նախնական ծրագրի՝ ընկճել առաջ ծայրագաւառները եւ յետոյ դառնալ